# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՔՍԻՏՈ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/59 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 3 | Աթոռ աշակերտական՝ 5-12-րդ դասարանների համար՝ աշակերտական աթոռ՝ մետաղական հիմքով, բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորվող: Նստելատեղը և մեջքի հենակը պետք է պատրաստված լինեն նրբատախտակից՝ 10մմ հաստությամբ, գույները և չափերը՝ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. 12-Ն հրամանի և ԳՈՍՏ 11015-93 համապատասխան: Աթոռի նստելատեղի չափսերը՝ 360x400մմ, նստելատեղի մակերևույթը պետք է ունենա (D=240մմ) փոսիկ, փոսիկի խորությունը 10-12մմ: Նստելատեղի նրբատախտակը աթոռի մետաղական կմախքի վերևի շրջանակի հետևի և կողային երկու կողմերից պետք է դուրս գա համապատասխանաբար 25 մմ, իսկ դիմացի եզրից՝ 50մմ, որը պետք է դեպի ներքև կորացնել 90º-ով, ( R=20-50մմ): Նրբատախտակի եզրերը պետք է լինեն ողորկ, մշակված: Աթոռի մեջքի հենակի չափսերը՝ 320x180 մմ, հենակը ողջ երկարությամբ պետք է դեպի ներս աղեղաձև կորացնել ( R=600մմ): Նրբատախտակը կմախքին միացվում է միջանցիկ հեղուսե մանեկային ամրացումով: Նրբատախտակի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝ նրբատախտակի հարթության վրա: Աթոռի կմախքը պետք է լինի մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 310x325մմ, որին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը: Աթոռի 2 զույգ մետաղական ոտքերից յուրաքանչյուրը իրենցից ներկայացնում է կարգավորվող բարձրությամբ երկու տրամաչափի քառանկյուն խողովակից՝ արտաքին և ներքին (միջուկ), բաղկացած կոնստրուկցիա: Արտաքին խողովակի չափերը՝ 25x25x2.0մմ, բարձրությունը՝ 315մմ: Ներքին խողովակի՝ միջուկի չափերն են՝ 20x20x2.0մմ, բարձրությունը՝ 315մմ: |

| | |
|---|---|
| | Աթոռի ոտքերի արտաքին խողովակները զոդման եղանակով ուղղահահայց միացվում են գետնին հորիզոնական դիրքով դրված մետաղական քառակուսի խողովակից պատրաստված 380մմ երկարությամբ հենակին, չափսերը՝ 25x25x2.0մմ: Հենակին միացվող 2 ոտքերի միջև հեռավորությունը՝ 100մմ: Հենակի եզրերը պետք է խցանված լինեն պլաստիկե բաց գույնի խցաններով՝ 5-6մմ հաստությամբ: Աթոռի ոտքերը պետք է ունենան 50մմ քայլով բարձության կարգավորման 3 հնարավորություն, որոնք յուրաքանչյուր կողմից ֆիքսվում են 2 հատ հեղուսե մանեկային կապով: Աթոռի նստելատեղի բարձրությունը հատակից մինչև նստելատեղի երեսը՝ 380-460մմ, իսկ հատակից մինչև մեջքի հենակի վերևի եզրի բարձրությունը 700-860մմ: Աթոռի նստելատեղի և մեջքի հենակի կազմած անկյունը պետք է լինի 95-130º, իսկ հանգույցը՝ կորացվի R=60մմ շառավղով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ ներկանյութով: Նմուշը /Նմուշ-3/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր՝ հաշված Մատակարարման օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքի չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±5%: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ЭКСИТО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/59 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 3 | |